Արձանագրություն N 2

N «ԱՀԱԿ-ԲՄԾՁԲ-18/1»
Ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան 20 դեկտեմբերի 2017թ

ժ.11:00

Մասնակցում էին՝

Հայտեր բացող անդամներ՝ Հռիփսիմե Պողոսյան /գլխավոր հաշվապահ/

Շուշանիկ Կարակոզյան /գլխավոր քույր/

Հանձնաժողովի նախագահ՝ Վարդան Գրիգորյան /ֆինանսատնտեսական գծով տնօրենի տեղակալ/

անդամներ՝ Լիանա Խաչատրյան /բուժական գծով տնօրենի տեղակալ/

Աննա Հովհաննիսյան /Կադրերի տեսուչ/

Հանձնաժողովի քարտուղար՝ Հայկանուշ Թովմասյան

Օրակարգ

հայտերի բացման և գնահատման նիստի մասին

1. Գնման ընթացակարգի հրավերը 04 դեկեմբերի 2017թ. հրապարակվել է www.armeps.am համակարգում և սահմանված կարգով հրապարակվել է տեղեկագրում:
2. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները և էլ. փոստի հասցեները
«ԱՀԱԿ-ԲՄԾՁԲ-18/1» ծածկագրով գնման ընթացակարգի հայտ են ներկայացրել
2.1 <<Եղվարդի Նեկտար>> ՍՊԸ, էլ.փոստ՝ exvardnektar@mail.ru
2.2 <<Ռեդի-Սթեդի>> ՍՊԸ, էլ.փոստ՝ Redi-stedi@mail.ru
2.3 <<Հայարփի Քալանթարյան>> ԱՁ, էլ.փոստ՝ euro-wedding@mail.ru
2.4 20 դեկտեմբերի 2017թ. դրությամբ այլ մասնակիցներ հայտ չեն ներկայացրել:
3. **Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.**
3.1 <<Եղվարդի Նեկտար>> ՍՊԸ-ի և <<Հայարփի Քալանթարյան>> ԱՁ-ի կողմից գնման ընթացակարգին ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:
3.2 <<Ռեդի-Սթեդի>> ՍՊԸ-ի կողմից գնման ընթացակարգին ներկայացված հայտում բացակայում էր հրավերով պահանջվող հավելված 9-ը՝ հայտի ապահովումը վճարման պահանջագրի հետ միասին: Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի հոդված 34-ի 1-ին կետը մերժել <<Ռեդի-Սթեդի>> ՍՊԸ-ի կողմից գնման ընթացակարգին ներկայացված հայտը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

4. **Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.**
Մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները.

Չափաբաժին 1՝ պատրաստի սննդի մատակարարման ծառայություններ

*Գնման գործընթացը կազմակերպվում է ղեկավարվելով "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիմքով

Մասնակցի անվանումը	Առաջարկված գինը /առանց ԱԱՀ/ ՀՀ դրամ	Առաջարկված գին /ներառյալ ԱԱՀ/ ՀՀ դրամ
	Չ/Հ1	**Չ/Հ1**
<<Հայարփի Քալանթարյան>> ԱՁ	**54020000**	**54020000**
<<Եղվարդի Նեկտար>> ՍՊԸ	**54750000**	**65700000**

5.Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն հանձնաժողովը որոշեց.

5.1 **«ԱՀԱԿ-ԲՄԾՁԲ-18/1»** ծածկագրով ընթացակարգի 1-ին չափաբաժնի համար առաջին տեղը զբաղեցնող է ճանաչվում <<Հայարփի Քալանթարյան>> ԱՁ-ն, որպես ընթացակարգի բավարար գնահատված հայտ և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

5.2 **«ԱՀԱԿ-ԲՄԾՁԲ-18/1»** ծածկագրով ընթացակարգի 1-ին չափաբաժնի համար երկրորդ տեղը զբաղեցնող է ճանաչվում <<Եղվարդի Նեկտար>> ՍՊԸ-ն:

5.3 **<<ԱՀԱԿ-ԲՄԾՁԲ-18/1>>** ծածկագրով ընթացակարգի հաջորդ նիստը՝ 1-ին և 2-րդ տեղերը զբաղեցրած մասնակիցների որակավորման չափանիշների և տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ, և հաղթող մասնակիցներին որոշելու համար կհրավիրվի Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից սույն հրավերի 8-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան եզրակացությունը ստանալուց և մասնակիցների կողմից համապատասխան փաստաթղթերը ներկայացնելուց հետո:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 3, դեմ – 0

6 Շահերի բախման բացակայության մասին

<<ԱՀԱԿ-ԲՄԾՁԲ-18/1>> ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նշված ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման նիստից հետո հայտարարում է, որ հիշյալ ընթացակարգի առնչությամբ չունի շահերի բախում:

Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Վարդան Գրիգորյան

Անդամներ՝ _____ Լիանա Խաչատրյան

_____ Աննա Հովհաննիսյան

_____ Հռիփսիմե Պողոսյան

_____ Շուշանիկ Կարակոզյան

Քարտուղար՝ _____ Հայկանուշ Թովմասյան